



EASTERN PARTNERSHIP  
CIVIL SOCIETY FORUM



Funded by  
the European Union



Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ:  
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում բացառապես Սերգեյ Գրիգորյանը, և  
պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

**ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ  
ԴԵՊՔՈՒՄ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ  
ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ**

## Նախաբան

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի կողմից արդար դատաքննության իրավունքի բնագավառում նախորդիվ իրականացված ուսումնասիրությունները<sup>1</sup> վկայում են ՀՀ-ում գործի քննության ողջամիտ ժամկետների համակարգային խախտումների առկայության մասին:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովման համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխանելու համար Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, ի թիվս արագացնող միջոցների, պետք է ապահովեն փոխհատուցման միջոցներ՝ ողջամիտ ժամկետի պահանջի ցանկացած խախտման համար, որն արդեն առաջացել է գործի քննության ընթացքում<sup>2</sup>:

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված է արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասի փոխհատուցման հնարավորությունը, դրա ապահովմանն ուղղված օրենսդրական կարգավորումները արդյունավետ չեն, ինչը վերահաստատվում է առկա իրավակիրառ պրակտիկայի տվյալներով:

Ոչ ՀՀ քաղաքացիական և ոչ էլ վարչական դատավարության օրենսգրքերով նախատեսված չեն ողջամիտ ժամկետի հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտման ճանաչման և ոչ նյութական վնասի հատուցման առանձնահատուկ դատավարական ընթացակարգ, ժամկետներ, չափորոշիչներ և անհրաժեշտ գործիքակազմ, այդ թվում՝ դատարանի կողմից ի պաշտոնե փաստական հանգամանքները պարզելու իրավունքին, նյութերի հասանելիության ապահովմանն ուղղված կարգավորումներ և այլ ընթացակարգային առանձնահատկություններ:

Հաշվի առնելով այն, որ քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված չէ վերադաս դատարանի կողմից անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման ճանաչման ընթացակարգ՝ բողոք ներկայացնելու հիմքերի, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների լիազորությունների համատեքստում, անձի իրավունքի խախտումը կարող է ճանաչվել բացառապես առաջին ատյանի դատարանի կողմից առանձին վարույթի շրջանակներում: Նման պայմաններում առաջին ատյանի դատարանի կողմից քննության է առնվում ողջամիտ ժամկետի պահանջի հիմքով անձի արդար դատաքննության իրավունքի խախտման հարցը այլ՝ նույն ատյանի կամ վերադաս դատարանի կողմից քննված գործի շրջանակում, ինչը խնդրահարույց է դատարանների աստիճանակարգի և դատավորի անկախության սկզբունքի համատեքստում:

Սույն հետազոտության նպատակն է վեր հանել այս բնագավառում առկա միջազգային փորձը՝ նպատակ ունենալով բացահայտել այլ պետություններում ողջամիտ ժամկետի հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտման ճանաչման և ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգերը և մոդելները, ինչպես նաև այս բնագավառում առկա միջազգային չափանիշները:

Հուսով ենք, որ սույն հետազոտությունը կնպաստի ողջամիտ ժամկետի հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում արդյունավետ փոխհատուցման ընթացակարգերի մշակման գործընթացին, ինչն իր հերթին էական ազդեցություն կունենա արդար դատաքննության իրավունքի հետագա խախտումների կանխարգելման վրա:

<sup>1</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերլուծություն. Արդար դատաքննության իրավունք. Հայաստան, 2021  
<https://ldpf.am/uploads/files/59289151898691dac953da9dc78366af.pdf>

<sup>2</sup> European Commission for Democracy through Law (Venice Commission) Report on the Effectiveness of National Remedies in respect of Excessive Length of Proceedings,  
[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2006\)036rev-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2006)036rev-e)

## Արդյունավետ փոխհատուցման ընթացակարգերին առնչվող միջազգային չափանիշներ

Ողջամիտ ժամկետի հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների սահմանման անհրաժեշտությունը պարբերաբար շեշտադրվել է մարդու իրավունքների խթանման և պաշտպանության բնագավառում գործող մի շարք միջազգային կառույցների կողմից: Դեռևս 2004թ.-ի ԵԽ Նախարարների կոմիտեի Իրավական պաշտպանության միջոցների բարելավման վերաբերյալ թիվ Rec (2004)6 հանձնարարականով շեշտել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատների բնույթն ու քանակը և դրանց վերաբերյալ կայացված վճիռները վկայում են այն մասին, որ անդամ պետությունների համար առավել քան երբևէ անհրաժեշտ է արդյունավետ և կանոնավոր կերպով ապահովել, որ համապատասխան իրավական պաշտպանության միջոցները առկա լինեն բոլոր հանգամանքներում, մասնավորապես՝ անհիմն տևական դատաքննությունների դեպքերում<sup>3</sup>:

ԵԽ նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)3 հանձնարարականը ԵԽ անդամ պետություններին հորդորում է ապահովել, որ վարույթը արագացնելուն կամ փոխհատուցում տրամադրելուն ուղղված դիմումները իրավասու մարմնի կողմից արագ քննվեն և պաշտպանության միջոցները լինեն արդյունավետ, համարժեք և հասանելի, ինչպես նաև ապահովեն, որ հատկացման ենթակա փոխհատուցման գումարները լինեն ողջամիտ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համահունչ<sup>4</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) մի շարք գործերով անդրադարձել է տևական քննությունների դեպքերում արդյունավետ պաշտպանության միջոցների ապահովման անհրաժեշտության հարցին: Դատարանը մասնավորապես արձանագրել է, որ այս հարցով լավագույն լուծումը, ինչպես շատ բնագավառներում, միանշանակ կանխարգելումն է: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ պայմանավորվող պետությունները պարտավորվում են իրենց դատական համակարգերն այնպես կազմակերպել, որ դատարանները կարողանան բավարարել նույն մասով սահմանված պահանջներից յուրաքանչյուրը, այդ թվում՝ գործով լուծման իրականացումը ողջամիտ ժամկետներում: Եթե դատական համակարգն այս առումով թերի է, ապա ամենաարդյունավետ լուծումը վարույթի չափից ավելի երկարաձգումը կանխարգելելու նպատակով այն արագացնելու համար նախատեսված իրավական պաշտպանության միջոցի նախատեսումն է: Այսպիսի իրավական պաշտպանության միջոցն անհերքելի առավելություն ունի այնպիսի իրավական պաշտպանության միջոցի նկատմամբ, որն ապահովում է միայն փոխհատուցում, քանի որ այն ոչ միայն վերացնում է խախտումը a posteriori (հետագայում), ինչպես փոխհատուցման ձևով իրավական պաշտպանության միջոցի դեպքում, այլև կանխարգելում է նույն տեսակի վարույթների մասով հաջորդական խախտումների հայտնաբերումը: Հետևաբար իրավական պաշտպանության այս տեսակն «արդյունավետ» է այնքանով, որքանով այն արագացնում է համապատասխան դատարանի որոշումը: Մինչև նույն ժամանակ վարույթի ընթացքն արագացնելուն ուղղված իրավական պաշտպանության միջոցը չի կարող բավարար լինել այնպիսի իրավիճակ կարգավորելու համար, որի դեպքում վարույթն ակնհայտորեն չափազանց երկար է եղել: Նման

<sup>3</sup> Council of Europe Committee of Ministers Recommendation [Rec\(2004\)6](https://rm.coe.int/16805dd18e) of the Committee of Ministers to member states on the improvement of domestic remedies, <https://rm.coe.int/16805dd18e>

<sup>4</sup> Recommendation CM/Rec(2010)3 of the Committee of Ministers to member states on effective remedies for excessive length of proceedings, [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805cf8e9](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf8e9)

իրավիճակում խախտումը կարող է պատշաճորեն վերացվել իրավական պաշտպանության միջոցների տարբեր տեսակների տրամադրմամբ, ներառյալ փոխհատուցման ձևով իրավական պաշտպանության միջոցը<sup>5</sup>:

ԵԽ անդամ պետությունների մեծ մասում վարույթն արագացնող միջոցները գործում են փոխհատուցման միջոցների հետ զուգակցմամբ, սակայն որոշ երկրներում վնասի փոխհատուցման միջոցը մնում է վարույթի ձգձգման պարագայում առկա իրավական պաշտպանության միակ միջոցը<sup>6</sup>: Պետությունների մեծ մասում առկա են ընթացիկ կամ ավարտված անհիմն տևական վարույթներով փոխհատուցման տրամադրման ընթացակարգեր: Որպես կանոն կիրառվող միջոցը, հատկապես ավարտված վարույթներով, ֆինանսական բնույթի փոխհատուցումն է<sup>7</sup>:

ԵԽ անդամ պետությունների շրջանում իրականացված համեմատական փորձի ուսումնասիրությունները<sup>8</sup> վկայում են այն մասին, որ փոխհատուցման դիմումը կարող է ներկայացվել նույն այն մարմնին, որը գնահատում և որոշում է քննության ողջամտությունը կամ այն կարող է ներկայացվել առանձին վարույթի շրջանակներում:

Փոխհատուցման տրամադրումը իր հերթին կարող է պայմանավորված լինել հետևյալ հիմքերով.

- Դատավորի կամ դատարանի այլ պաշտոնատար անձի մեղքի առկայություն.
- Դատարանների գերծանրաբեռնվածություն.
- Վարույթի իրականացման ընթացքում խախտման առկայություն, ներառյալ, եթե որոշակի գործողությունը չի իրականացվել կամ որոշումը չի կայացվել օրենսդրությամբ սահմանված ժամկետում.
- Վարույթի ընթացքում ոչ իրավաչափ գործողության կամ բացթողման առկայություն:

Կուդլան ընդդեմ Լեհաստանի գործով կայացված վճռից<sup>9</sup> ի վեր Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաստատել է, որ փոխհատուցման միջոցները կարող են արդյունավետ իրավական պաշտպանության միջոց հանդիսանալ Կոնվենցիայի 13-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով: Միաժամանակ Դատարանը շեշտել է նաև, որ իրավական պաշտպանության միջոցն ինքնին պետք է համապատասխանի մի շարք պահանջներին: ՄԻԵԴ-ը իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը գնահատում է հետևյալ չափանիշներով.

ա/ Փոխհատուցման վերաբերյալ դիմումը պետք է քննվի ողջամիտ ժամկետում

բ/ Փոխհատուցման վճարումը պետք է անհապաղ իրականացվի և որպես կանոն ոչ ուշ, քան փոխհատուցում սահմանող որոշման ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում

գ/ փոխհատուցման ընթացակարգի դատավարական կանոնները պետք է համապատասխանեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդարացիության սկզբունքին

դ/ դատական ծախսերին առնչվող կանոնները չպետք է անհամաչափ բեռ դնեն դատավարության մասնակիցների վրա, եթե նրանց դիմումը հիմնավորված է

<sup>5</sup> Scordino v. Italy (no. 1), Cocchiarella v. Italy, Fil LLC v. Armenia

<sup>6</sup> EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION) Report on the Effectiveness of National Remedies in Respect of Excessive Length of Proceedings, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2006\)036rev-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2006)036rev-e)

<sup>7</sup> Council of Europe Committee of Ministers Recommendation [Rec\(2004\)6](https://rm.coe.int/16805dd18e) of the Committee of Ministers to member states on the improvement of domestic remedies, <https://rm.coe.int/16805dd18e>

<sup>8</sup> EUROPEAN COMMISSION FOR THE EFFICIENCY OF JUSTICE (CEPEJ) Length of court proceedings in the member states of the Council of Europe based on the case law of the European Court of Human Rights, <https://rm.coe.int/cepej-2018-26-en-rapport-calvez-regis-en-length-of-court-proceedings-e/16808ffc7b>

<sup>9</sup> Kudla v. Poland, decision of 26 October 2000

ե/ Փոխհատուցման չափը ոչ ողջամիտ չպետք է լինի համանման գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանվող փոխհատուցումների համեմատությամբ<sup>10</sup>:

## **Փոխհատուցման ընթացակարգերին առնչվող համեմատական փորձի ամփոփում**

Ստորև ներկայացվում են ողջամիտ ժամկետի հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում առանձին պետություններում առկա փոխհատուցման ընթացակարգերի կարգավորումները: Պետությունների ընտրությունը կատարելիս նախապատվությունը տրվել է առանձին օրենսդրական ակտի միջոցով կանոնակարգումներ սահմանող պետություններին՝ առավել համապարփակ պատկեր ձևավորելու նպատակով:

### **Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն**

Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետության «Դատարանների մասին» օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք)<sup>11</sup> ուղղակիորեն նախատեսում է ողջամիտ ժամկետի խախտման հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտման պարագայում արդարացի փոխհատուցում ստանալու հնարավորություն:

Ըստ Օրենքի՝ ողջամիտ ժամկետի խախտման հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտման վերաբերյալ որոշում կայացնելու իրավասու մարմինը Մակեդոնիայի Հանրապետության Գերագույն դատարանն է:

Եթե դատավարության կողմը գտնում է, որ իրավասու դատարանը խախտել է ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքը, ապա նա իրավունք ունի դիմում ներկայացնելու Մակեդոնիայի Հանրապետության Գերագույն դատարան: Դիմումը կարող է ներկայացվել դատաքննության ընթացքում կամ դատարանի ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը վեցամսյա ժամկետում:

Մակեդոնիայի Հանրապետության Գերագույն դատարանը սահմանված պահանջներին համապատասխանող դիմումի վերաբերյալ վեց ամսվա ընթացքում կայացնում է որոշում առ այն, թե արդյոք ստորադաս դատարանը խախտել է անձի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված պահանջներն ու սկզբունքները, մասնավորապես գործի բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը դատավարության ընթացքում, որոշում կայացրած դատարանի վարքագիծը:

Եթե Գերագույն դատարանը հաստատում է, որ խախտվել է ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքը, դատական գործն ընթացքի մեջ լինելու դեպքում՝ որոշմամբ պետք է վերջնաժամկետ սահմանի այն քննող դատարանի համար, իսկ հայցը ներկայացրած կողմի համար պետք է սահմանի արդարացի փոխհատուցում նրա՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման համար:

Փոխհատուցումը տրամադրվում է Դատարանի բյուջեից՝ Գերագույն դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց պահից՝ երեք ամսվա ընթացքում:

<sup>10</sup> EUROPEAN COMMISSION FOR THE EFFICIENCY OF JUSTICE (CEPEJ) Length of court proceedings in the member states of the Council of Europe based on the case law of the European Court of Human Rights, <https://rm.coe.int/cepej-2018-26-en-rapport-calvez-regis-en-length-of-court-proceedings-e/16808ffc7b>

<sup>11</sup> [https://advocatetamoy.com/wp-content/uploads/2023/05/law\\_on\\_courts.pdf](https://advocatetamoy.com/wp-content/uploads/2023/05/law_on_courts.pdf)

Օրենքը սահմանում է նաև որոշակի ընթացակարգային կարգավորումներ: Այսպես, Գերագույն դատարանը դիմումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում դիմում է առաջին ատյանի դատարան՝ գործի նյութերի պատճենները ստանալու նպատակով և անհրաժեշտության դեպքում դիմում է առավել բարձր ատյանի դատարան՝ մինչ այդ տեղի ունեցած դատաքննության տևողության մասին զեկույց ստանալու համար:

Գերագույն դատարանը որոշումը կայացնում է երեք դատավորի կազմով ոչ հրապարակային (գրավոր) ընթացակարգով: Որպես բացառություն՝ դատարանը կարող է որոշում կայացնել լսելու դիմում ներկայացրած կողմին և դատարանի ներկայացուցչին: Կողմը իրավունք ունի Գերագույն դատարանի երեք դատավորի կազմով կայացված որոշումը ստանալուց հետո ութօրյա ժամկետում բողոքարկելու այն՝ բողոք ներկայացնելով Գերագույն դատարան:

## Լեհաստանի Հանրապետություն

«Դատախազի կողմից իրականացվող կամ վերահսկվող գործի քննությունը և դատական վարույթը առանց չարդարացված ձգձգումների իրականացնելու կողմերի իրավունքի խախտման համար բողոք ներկայացնելու մասին» Լեհաստանի Հանրապետության 2004 թվականի հունիսի 17-ին ընդունված ակտով<sup>12</sup> կարգավորվում է բողոք ներկայացնելու և քննելու ընթացակարգերը այն կողմի համար, որի գործն առանց չարդարացված ձգձգումների իրականացնելու իրավունքը խախտվել է նախաքննական վարույթն իրականացնող կամ վերահսկող դատախազի կամ դատարանի գործողության կամ անգործության հետևանքով:

Դատավարության կողմերը կարող են ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման վերաբերյալ բողոք ներկայացնել, երբ դատական քննությունը տևում է ավելի երկար, քան անհրաժեշտ է գործի լուծման համար կարևոր և կոնկրետ փաստական և իրավական հանգամանքները քննելու համար, կամ ավելի երկար է տևում, քան անհրաժեշտ է կատարողական գործողություններ ձեռնարկելու կամ դատական ակտի կատարումն ապահովելու համար:

Դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում.

ա) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից ձեռնարկված գործողությունները և դրանց արդյունավետությունը՝ նկատի ունենալով գործի փաստական և իրավական բարդությունը,

բ) բողոք ներկայացրած կողմի համար բարձրացված հարցերի լուծում ստանալու կարևորությունը,

գ) վարույթի մասնակիցների վարքագիծը:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման վերաբերյալ գործը քննում է այդ ժամկետը խախտած դատարանի վերադաս ատյանի դատարանը:

Եթե բողոքը վերաբերում է շրջանային դատարանում գործի քննության չափից ավելի երկար տևողությանը, ապա բողոքը իրավասու է քննել վերաքննիչ դատարանը: Եթե բողոքը վերաբերում է վերաքննիչ կամ Գերագույն դատարաններում գործի քննության չափից ավելի երկար տևողությանը, ապա բողոքը իրավասու է քննել Գերագույն դատարանը: Եթե բողոքը վերաբերում է շրջանային վարչական կամ Գերագույն վարչական դատարաններում գործի քննության չափից ավելի տևողությանը, ապա բողոքը իրավասու է քննել Գերագույն վարչական դատարանը:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման վերաբերյալ բողոքը ներկայացվում է գործի քննության ընթացքում՝ այն դատարանին որտեղ քննվում է հիմնական գործը: Այնուհետև, դատարանը ներկայացված բողոքը և գործի նյութերի պատճենները ներկայացնում է բողոքը քննելու

---

<sup>12</sup> Ամբողջական անվանումը՝ Act on the Complaint for Breach of the Right to Have a Case Examined in an Investigation Conducted or Supervised by a Prosecutor and in Judicial Proceedings without Undue Delay (USTAWA o skardze na naruszenie prawa strony do rozpoznania sprawy w postępowaniu przygotowawczym prowadzonym lub nadzorowanym przez prokuratora i postępowaniu sądowym bez nieuzasadnionej zwłoki), <https://sip.lex.pl/akty-prawne/dzu-dziennik-ustaw/skarga-na-naruszenie-prawa-strony-do-rozpoznania-sprawy-w-postepowaniu-17119205>

իրավասություն ունեցող դատարանին: Դատարանները գործը քննում են երեք դատավորների կազմով: Գործը քննող դատարանը որոշումը կայացնում է բողոքը ներկայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման դեպքում դատարանն իր նախաձեռնությամբ կամ բողոքարեթի պահանջով կարող է կարգադրել էստ էության գործը քննող դատարանին՝ ձեռնարկելու համապատասխան միջոցներ: Նման կարգադրությունը չպետք է անդրադառնա քննվող գործի փաստական կամ իրավական գնահատականին:

Եթե բողոքը հիմնավորված է, բողոք ներկայացնող անձի պահանջով դատարանը պարտավորեցնում է Պետական գանձապետարանին վճարել 2.000-ից 20.000 լեհական դրամ գումարի չափով փոխհատուցում (ինչը ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման համար փոխհատուցման առանձին տեսակ է, որը վճարվում է առանձին կանոններին համապատասխան): Եթե սահմանվում է դրամական փոխհատուցում, ապա վճարումը կատարվում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը խախտած դատարանի կողմից՝ դատարանի սեփական միջոցների հաշվին:

Բողոք բերած անձը նույն գործի շրջանակներում կարող է նոր բողոք ներկայացնել՝ դատարանի կողմից որոշման կայացման օրվանից 12 ամիս անց, իսկ նախաքննության վարույթի (որի շրջանակներում կիրառվել է խափանման միջոց կալանավորումը) կամ կատարողական վարույթի շրջանակներում՝ դատարանի որոշման կայացման օրվանից 6 ամիս անց:

Կողմը, որը վերոնշյալ օրենքին համապատասխան բողոք չի ներկայացրել, կարող է հայցադիմում ներկայացնել դատարան Լեհաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ըստ էության գործի քննությունն ավարտվելուց հետո՝ պահանջելով փոխհատուցել ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման արդյունքում պատճառված վնասը:

## **Իտալիայի Հանրապետություն**

«Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման դեպքում արդարացի փոխհատուցում տրամադրելու և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի փոփոխության մասին» Իտալիայի Հանրապետության 24.03.2001 թվականի N 89 օրենքը<sup>13</sup>, որն ուժի մեջ է մտել 18.04.2001 թվականին, նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք կարող է արդարացի փոխհատուցում ստանալ Սարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «ողջամիտ ժամկետի» պահանջի խախտման արդյունքում կրած նյութական և ոչ նյութական վնասի համար:

Ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու նպատակով Քաղաքացիական դատավարության օրենսգրքը նախատեսում է կանխարգելիչ միջոց՝ գործի քննությունը պարզեցված ընթացակարգով քննելու հնարավորությամբ: Քրեական դատավարությունում նույնպես նախատեսված է գործի քննությունը պարզեցված ընթացակարգով քննելու հնարավորությունը:

Արդարացի փոխհատուցում ստանալու դիմում չի կարող ներկայացնել այն անձը, որը չի օգտվել կանխարգելիչ միջոցի հնարավորությունից: Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման հանգամանքները պարզելիս դատարանը գնահատում է քննվող գործի բարդությունը, առարկան, կողմերի, ինչպես նաև դատավորի վարքագիծը: Գործի քննությունը համարվում է ողջամիտ ժամկետում իրականացված, եթե գործի քննությունը առաջին աստիճանի դատարանում չի գերազանցում երեք տարին, երկրորդ աստիճանում՝ երկու տարին, և մեկ տարին՝ երրորդ աստիճանում:

<sup>13</sup> LAW 24 March 2001, n. 89 Provision of fair compensation in case of violation of the reasonable time of the trial and modification of article 375 of the code of civil procedure (LEGGE 24 marzo 2001, n. 89 Previsione di equa riparazione in caso di violazione del termine ragionevole del processo e modifica dell'articolo 375 del codice di procedura civile, <https://www.normattiva.it/uri-res/N2Ls?urn:nir:stato:legge:2001-03-24:89;vig=>



Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման դեպքում դատավորը որպես արդարացի փոխհատուցում սահմանում է 400 եվրոյից ոչ պակաս և 800 եվրոյից ոչ ավել գումար՝ յուրաքանչյուր տարվա կամ վեց ամսից ավել կտրվածքով ժամանակահատվածի համար, որը գերազանցել է գործի քննության ողջամիտ ժամկետը: Փոխհատուցվող գումարը կարող է ավելացվել 20%-ով երրորդ տարվան հաջորդող ամեն տարվա համար և 40%-ով՝ յոթերորդ տարվան հաջորդող ամեն տարվա համար: Փոխհատուցվող գումարը կարող է նվազեցվել 20%-ով, երբ դատավարության մասնակիցների թիվը տասից ավելին է, իսկ 50 մասնակիցներից ավելիի դեպքում՝ փոխհատուցման գումարը կարող է նվազեցվել 40%-ի չափով:

Արդարացի փոխհատուցման պահանջով դիմումը ներկայացվում է վերաքննիչ դատարանի նախագահին ընդդեմ Արդարադատության նախարարության, եթե գործը ըստ էության քննվել է ընդհանուր իրավասության դատարաններում: Դիմումի հետ միասին ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝ ա) պատասխանողի ծանուցումը, պատասխանողի՝ դատարանում ներկայանալուն առնչվող փաստաթղթերը, վարույթին առնչվող փաստաթուղթ բ) դատական նիստի արձանագրություններ, դատարանի որոշումներ, գ) դատարանի վճիռը, եթե վարույթն ավարտվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացմամբ:

Վերաքննիչ դատարանի նախագահը կամ դատարանի մագիստրատը արդարացի փոխհատուցման պահանջի վերաբերյալ պատճառաբանված որոշում է կայացնում՝ դիմումը ներկայացնելուց հետո երեսնօրյա ժամկետում:

Դիմումի բավարարման դեպքում վերաքննիչ դատարանը դիմում է համապատասխան դատարանի քարտուղարություն և պահանջում վճարել փոխհատուցման գումարը: Արդարացի փոխհատուցման վերաբերյալ պահանջը կարող է ներկայացվել դատական քննության արդյունքներով կայացված եզրափակիչ ակտի վերջնական դառնալու օրվանից՝ վեց ամսվա ընթացքում:

Դիմումի և արդարացի փոխհատուցում տրամադրելու մասին որոշման հաստատված պատճենները ուղարկվում են այն կողմին, որի դեմ ներկայացված է պահանջը: Դիմումը բավարարելու մասին որոշումը ուղարկվում է նաև Հաշվեքննիչ պալատի գլխավոր դատախազին՝ պատասխանատվության ենթարկելուն ուղղված հնարավոր վարույթներ հարուցելու նպատակով:

Արդարացի փոխհատուցման պահանջի վերաբերյալ կայացված որոշումը կարող է բողոքարկվել որոշման կայացման կամ դրա մասին ծանուցման օրվանից 30 օրվա ընթացքում: Վերաքննիչ դատարանի կազմի մեջ չի կարող ընդգրկվել այն դատավորը, որը կայացրել է համապատասխան որոշումը: Բողոքը ներկայացնելու օրվանից չորս ամսվա ընթացքում վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել վճարելության կարգով: Որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

## Սլովենիայի Հանրապետություն

«Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանության մասին» Սլովենիայի օրենքը<sup>14</sup> նախատեսում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովմանն ուղղված հետևյալ պաշտպանության միջոցները.

ա) գործի քննությունը արագացնելու մասին դիմումի (հսկողական դիմում) ներկայացում,

բ) գործի քննության ժամկետի սահմանման միջնորդության ներկայացում,

<sup>14</sup> Zakon o varstvu pravice do sojenja brez nepotrebnega odlašanja (ZVPSBNO) <http://pisrs.si/Pis.web/pregledPredpisa?id=ZAKO4726#>

զ) արդարացի փոխհատուցման դիմումի ներկայացում:

Օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառման վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի գործի հանգամանքները, ներառյալ գործի իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը, ներառյալ նրանց կողմից դատավարական ընթացակարգերից օգտվելու և պարտավորությունների կատարման հանգամանքները, դատական նիստերի նշանակման և դատական ակտերի կայացման համար օրենքով նախատեսված ժամկետները, այլ ատյաններում գործի քննության տևողությունը, գործի տեսակն ու բնույթը, ինչպես նաև կարևորությունը կողմի համար:

Եթե դատավարության կողմը գտնում է, որ դատական քննությունը անհիմն ձգձգվում է, ապա վերջինս կարող է հսկողական դիմում ներկայացնել դատարան՝ նույն դատարանի նախագահի անունով: Սահմանված պահանջներին համապատասխանող դիմումի ներկայացման դեպքում՝ դատարանի նախագահը պահանջում է դատավորից 15-օրյա ժամկետում ներկայացնել զեկույց գործի քննության ձգձգման պատճառների, ինչպես նաև գործն ավարտին հասցնելու հնարավոր դատավարական ժամկետների վերաբերյալ դատավորի գնահատականի վերաբերյալ:

Եթե դատավորը գրավոր տեղեկացնում է դատարանի նախագահին, որ հսկողական բողոքը ստանալու օրվանից չորս ամիսը չգերազանցող ժամկետում կձեռնարկվեն համապատասխան դատավարական գործողություններ, որոնք կարող են փաստացի արագացնել գործի լուծման ընթացքը, դատարանի նախագահը այդ մասին տեղեկացնում է կողմին և դրանով ավարտում հսկողական դիմումի քննությունը:

Եթե դատարանի նախագահը գտնում է, որ դատարանն անհիմն կերպով ձգձգում է գործի քննությունը, ապա նա գործի հանգամանքներից և բնույթից ելնելով՝ սահմանում է որոշակի դատավարական գործողությունների կատարման ժամկետ, սակայն գործի հանգամանքներից ելնելով, հատկապես եթե գործն անհետաձգելի է, կարող է առաջնահերթ լուծում պահանջել: Եթե դատավորին հանձնարարվում է կատարել համապատասխան դատավարական գործողություններ, որոնք կարող են արդյունավետորեն արագացնել գործի լուծումը, ապա սահմանվում են նաև դրանք ավարտելու ժամկետներներ, որոնք չպետք է տասնհինգ օրից պակաս և վեց ամսից ավել նախատեսվել: Բացի այդ սահմանվում է նաև հատուկ ժամկետ, որի ընթացքում դատավորը պետք է զեկույցի կատարված գործողությունների վերաբերյալ:

Եթե դատարանի նախագահը գտնում է, որ դատավորը ծանրաբեռնված է, ապա գործը կարող է մակագրել մեկ այլ դատավորի:

Դատավարության կողմը կարող է գործի քննության համար վերջնաժամկետ սահմանելու միջնորդություն ներկայացնել, եթե նախագահող դատավորը մերժել է հսկիչ դիմումը՝ դրան ներկայացվող պահանջների խախտման հիմնավորմամբ և եթե գործի քննությունն արագացնելու դատավարական գործողություններ կատարելու պահանջը չի կատարվել:

Առաջին ատյանի դատարանի կողմից քննվող գործերով վերջնաժամկետ սահմանելու կողմի միջնորդությունները իրավասու է քննել և լուծել Վերաքննիչ դատարանի նախագահը: Վերաքննիչ դատարանի և Սյովենիայի Հանրապետության Բարձրագույն դատարանի կողմից քննվող գործերով վերջնաժամկետ սահմանելու կողմի միջնորդությունները քննում և որոշում է կայացնում Սյովենիայի Հանրապետության Բարձրագույն դատարանի նախագահը:

Գործը քննող դատարանի նախագահը գործի նյութերը հսկիչ բողոքի հետ միասին անհապաղ ուղարկում է գործի քննության վերջնաժամկետ սահմանելու մասին միջնորդությունը քննող դատարանի նախագահին: Գործի քննության վերջնաժամկետ սահմանելու միջնորդության արդյունքում կայացված որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Հսկիչ դիմումը բավարարվելու կամ գործի վերջնաժամկետ սահմանվելու դեպքում կողմը կարող է Գլխավոր դատախազի գրասենյակ ներկայացնել արդարացի փոխհատուցման տրամադրման վերաբերյալ դիմում:

Արդարացի փոխհատուցումը ապահովվում է.

1. ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտմամբ պատճառված վնասի դրամական փոխհատուցմամբ,
2. դիմողի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման վերաբերյալ Գլխավոր դատախազի գրասենյակի գրավոր հայտարարությամբ,
3. դիմողի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման վերաբերյալ կայացված որոշման հրապարակմամբ:

Արդարացի փոխհատուցման դիմումը ներկայացվում է Գլխավոր դատախազի գրասենյակ՝ վերջնական որոշումը ստանալուց կամ տվյալ գործով օրենքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից որևէ մեկը կիրառելու մասին Գերագույն դատարանի որոշումը ստանալուց հետո ինը ամսվա ընթացքում: Գլխավոր դատախազի գրասենյակը որոշում է կայացնում դիմողի առաջարկների հիման վրա, եթե գտնում է, որ արդարացի փոխհատուցման պահանջը հիմնավոր է. այս դեպքում ձեռք է բերվում արտադատական հաշտություն:

Արտադատական հաշտություն ձեռք չբերվելու դեպքում՝ կողմը կարող է հայց ներկայացնել դատարան ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտմամբ պատճառված վնասի համար դրամական փոխհատուցում տրամադրելու պահանջով: Վնասի փոխհատուցման հայցը որոշելու բացառիկ տարածքային իրավասությունը վերապահված է այն շրջանային դատարանին, որտեղ դիմողը մշտապես կամ ժամանակավոր բնակվում կամ հաշվառված է: Վնասի հատուցման հետ կապված գործի վերանայում չի իրականացվում: Դատարանը, որը գտնում է, որ տեղի է ունեցել դիմողի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտում, վերջնական որոշումը հրապարակում է դատարանի կայքում: Որոշումը հրապարակվում է երկամսյա ժամկետում:

## Ֆինլանդիա

«Դատական գործի քննությունը չարդարացված ձգձգումներով իրականացնելու համար փոխհատուցում տրամադրելու մասին» Ֆինլանդիայի օրենքը<sup>15</sup> կարգավորումներ է նախատեսում դատական քննությունը անհարկի ձգձգումներով իրականացնելու համար պետական միջոցներից փոխհատուցում ստանալու կողմի իրավունքի վերաբերյալ, այն դեպքում երբ խախտվել է վերջինիս ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը: Այս իրավունքի խախտումը գնահատելու համար հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները՝

- ա) գործի բնույթն ու ծավալը,
- բ) դատավարության կողմերի, դատարանի գործողությունները,
- գ) դատական գործի կարևորությունը կողմի համար:

Փոխհատուցումը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 1500 եվրոյի չափով՝ այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում գործի վարույթը չարդարացված կերպով ձգձգվել է: Փոխհատուցման ընդհանուր գումարը կարող է ավելացվել առավելագույնը 2000 եվրոյով, եթե գործի քննության հիմքում ընկած հարցը առանձնահատուկ նշանակություն ունի կողմի համար, այն է՝ գործը անմիջական ազդեցություն ունի կողմի առողջության, եկամտի, իրավական կարգավիճակի կամ այլ համեմատելի հանգամանքների վրա: Փոխհատուցման առավելագույն չափը սահմանվում է 10.000 եվրո:

<sup>15</sup> Act on Compensation for the Excessive Length of Judicial Proceedings (362/2009, amendments up to 465/2011 included)

<https://www.finlex.fi/en/laki/kaannokset/2009/en20090362?search%5Btype%5D=pika&search%5Bkieli%5D%5B0%5D=en&search%5Bpika%5D=Act%20on%20Compensation%20for%20the%20Excessive%20Length%20of%20Judicial%20Proceedings>

Փոխհատուցում ստանալու պահանջի մասին հայցը ներկայացվում է այն դատարան, որտեղ քննվում է հիմնական գործը և հայցը քննում է դատարանի այն կազմը, որը քննում է հիմնական գործը:

Հայցը պետք է ներկայացվի որքան հնարավոր է շուտ՝ մինչև գործի քննության ավարտը: Հայցը չի կարող առանց հիմնավոր պատճառաբանության ներկայացվել այնպիսի ուշ փուլում, ինչպիսին է Գերագույն դատարանում գործի քննության փուլը: Հայցային վարույթում պետությանը ներկայացնում է Արդարադատության նախարարությունը, որին լավամ լինելու իրավունք չի վերապահվում, եթե դրա համար չկան առանձնահատուկ պատճառներ:

Արդարացի փոխհատուցում տրամադրելու դեպքում դատարանը անհապաղ ծանուցում է այդ մասին Արդարադատության նախարարությանը: Արդարացի փոխհատուցման մասին դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման այն ընթացակարգով, որի շրջանակներում բողոքարկվում է ըստ էության գործով կայացված որոշումը:

## Ամփոփում

Հաշվի առնելով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման դեպքում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներին վերաբերող միջազգային չափանիշները և համեմատական փորձը՝ կարող ենք եզրահանգել, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում այս իրավունքի խախտման ճանաչման և փոխհատուցման ընթացակարգերի բնագավառում անհրաժեշտ և բավարար իրավակարգավորումներ, ինչն իր հերթին սահմանված իրավական պաշտպանության միջոցը դարձնում է անարդյունավետ:

Մասնավորապես, նախատեսված չեն ողջամիտ ժամկետի հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտման ճանաչման և փոխհատուցման առնչվող վարույթի հատուկ դատավարական ժամկետներ, ինչպես նաև խախտման ճանաչման համար անհրաժեշտ դատավարական ընթացակարգեր, այդ թվում՝ համապատասխան դատարանի կողմից գործի նյութերին ծանոթանալու կամ այլ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու գործիքակազմեր:

Ողջամիտ ժամկետի հիմքով անձի՝ արդար դատաքննության իրավունքի խախտման ճանաչման և փոխհատուցման սահմանման հայցը ենթակա է քննության առաջին ատյանի դատարանի կողմից, որը փաստորեն քննելու է այլ՝ նույն ատյանի կամ վերադաս դատարանի կողմից քննված գործի շրջանակում թույլ տրված իրավունքի խախտումը: Նման իրավակարգավորումը իրավաչափ համարվել չի կարող՝ հաշվի առնելով դատարանների աստիճանակարգության և դատավորի անկախության սկզբունքները: Այս մոտեցումը հակասում է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 28.11.2007թ.-ի թիվ ՍԴՈ-719 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշումներին, ինչպես նաև առաջադեմ միջազգային փորձի միտումներին:

Գտնում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ անհրաժեշտ է նախատեսել ողջամիտ ժամկետի հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտման ճանաչման և ոչ նյութական վնասի հատուցման առանձնահատուկ դատավարական ընթացակարգ, այդ թվում՝ հատուկ և սեղմ դատավարական ժամկետներ, դատարանի կողմից փաստական հանգամանքները ի պաշտոնե պարզելու իրավունքին, նյութերի հասանելիության ապահովմանն ուղղված կարգավորումներ և այլ վարույթային առանձնահատկություններ:

Հուսով ենք, որ սույն հետազոտությունը կնպաստի վերոգրյալ ընթացակարգերի սահմանման ուղղությամբ իրավաստեղծ աշխատանքների նախաձեռնմանը և իրականացմանը:

## Գրականության ցանկ

1. ՀՀ Զաղաքացիական օրենսգիրք
2. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
3. ՀՀ Սահմանադրական դատարանի 28.11.2007թ.-ի թիվ ՍԴՈ-719 որոշում
4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերլուծություն. Արդար դատաբնության իրավունք. Հայաստան, ԻԶՊՀ (<https://ldpf.am/uploads/files/59289151898691dac953da9dc78366af.pdf>)
5. Recommendation Rec(2004)6 of the Committee of Ministers to member States on the improvement of domestic remedies (adopted on 12 May 2004) (<https://rm.coe.int/16805dd18e>)
6. Frederic Edel. The length of civil and criminal proceedings in the case-law of the European Court of Human Rights. – Council of Europe Publishing, 2007. ([https://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRFILES/DG2-EN-HRFILES-16\(2007\).pdf](https://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRFILES/DG2-EN-HRFILES-16(2007).pdf))
7. European Commission for the Efficiency of Justice (CEPEJ): Length of court proceedings in the member states of the Council of Europe based on the case law of the European Court of Human Rights (CEPEJ(2018)26) (<https://rm.coe.int/cepej-2018-26-en-rapport-calvez-regis-en-length-of-court-proceedings-e/16808ffc7b>)
8. European Commission for the Efficiency of Justice (CEPEJ), A new objective for judicial systems: the processing of each case within an optimum and foreseeable timeframe, Framework Program, CEPEJ (2004)19rev2 (<https://rm.coe.int/16807474de>)
9. Recommendation CM/Rec (2010)3 of the Committee of Ministers to member states on effective remedies for excessive length of proceedings (adopted by the Committee of Ministers on 24 February 2010 at the 1077th meeting of the Ministers' Deputies)([https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805cf8e9](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf8e9))
10. The improvement of domestic remedies with particular emphasis on cases of unreasonable length of proceedings, Workshop held at the initiative of the Polish Chairmanship of the Council of Europe's Committee of Ministers, Directorate General of Human Rights, Council of Europe, 2006 ([https://www.echr.coe.int/Documents/Pub\\_coe\\_Domestic\\_remedies\\_2006\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Pub_coe_Domestic_remedies_2006_ENG.pdf))
11. Effective Remedy for Excessive Length of Proceedings: A Macedonian Perspective, Access to Justice in Eastern Europe ISSN 2663-0575 (Print) ISSN 2663-0583 (Online) ([https://ajee-journal.com/upload/attaches/att\\_1614523929.pdf](https://ajee-journal.com/upload/attaches/att_1614523929.pdf))
12. Report on the effectiveness of national remedies in respect of excessive length of proceedings adopted by the Venice Commission at its 69th Plenary Session (Venice, 15-16 December 2006), CDL-AD(2006)036rev,03/04/2007 ([https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2006\)036rev-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2006)036rev-e))
13. Excessive length of proceedings and its consequences, Author Barbara Wiśniewska, 23.06.2016 (<https://codozasady.pl/en/p/excessive-length-of-proceedings-and-its-consequences>)

14. A Right to Have One's Case Heard within a Reasonable Time before the Czech and the Polish Supreme Administrative Courts – Standards, the Reality and Proposals for the Future, Authors Wojciech Piątek, Lukáš Potěšil, Published on 26 May 2021 (<https://utrechtlawreview.org/articles/10.36633/ulr.586>)
15. Law on Courts of the Republic of Macedonia, ([https://advocatetamoy.com/wp-content/uploads/2023/05/law\\_on\\_courts.pdf](https://advocatetamoy.com/wp-content/uploads/2023/05/law_on_courts.pdf))
16. Act on the Complaint for Breach of the Right to Have a Case Examined in an Investigation Conducted or Supervised by a Prosecutor and in Judicial Proceedings without Undue Delay, (<https://sip.lex.pl/akty-prawne/dzu-dziennik-ustaw/skarga-na-naruszenie-prawa-strony-do-rozpoznania-sprawy-w-postepowaniu-17119205>)
17. LAW 24 March 2001, n. 89 Provision of fair compensation in case of violation of the reasonable time of the trial and modification of article 375 of the code of civil procedure, (<https://www.normattiva.it/uri-res/N2Ls?urn:nir:stato:legge:2001-03-24:89!vig=>)
18. Slovenian law on protection of the right to a hearing within a reasonable time, (<http://pisrs.si/Pis.web/pregledPredpisa?id=ZAKO4726#>)
19. Act on Compensation for the Excessive Length of Judicial Proceedings (362/2009, amendments up to 465/2011 included) (<https://www.finlex.fi/en/laki/kaannokset/2009/en20090362?search%5Btype%5D=pika&search%5Bkieli%5D%5B0%5D=en&search%5Bpika%5D=Act%20on%20Compensation%20for%20the%20Excessive%20Length%20of%20Judicial%20Proceedings>)